ւատարիմքն, ի վաղուց հետէ ընդ նմա չրջեալ յամենայն տեղիս միակամ և միախորհուրդ։

Շաբաթ օրս (24 Փեբր.) Յովանէս վարդապետն պատիւ արարեալ թէրզի պաշուն ի Սուրբ Նիկողոս երգով քնարաց, նստան ի խմել մինչ յիրիկուն։

Իե-իս՝ Բուն Բարեկենդան։

Դշիս (28 Փեբր) զՇամի զատէն հափս արար, որ էր ռէյիզ, և զինչ ևս ունէր գանձ և արծաթ՝ զամենայն ի նմանէ կողոպտեաց մինչև զձիսն, և զըռզակ նորին ի ծախ հանել ետ և առաւ զամենեսեան առ ինքն։ Եւ յետ աւուրց ինչ հանեալ զնա ի բանտէն բազումս չարչարեաց, թէ զի՛նչ ունիցի՝ ասասցէ. և ապա զնա մերկ և բոկ արարեալ՝ սաստիկ հրամանաւ ասաց ոչ մնալ յերկիրս այս, այլ կորնչիցի յերկիր հեռի, և նա փախ տվեալ գնաց ի Բեսապէ։ Եւ ոչ եսպան զնա, քանզի և ողորմասիրտ էր և ոչ զոք եսպան, բայց որում ոխ ունէր՝ զայնոսիկ

Մարտի ամիս օր Եչի. մեր Վարդապետն ի Հրեշտակապետ գնաց։

Դ-իս օր Կիրակի. զտէֆտէրտարն քշեց և մարդ եդ, որ հասեալ մօտ ի Կէկիպլիզէ, որ ըմբռնեալ զնա մերկացուցանելով և ի ծառն կապեն և ինքեանք նըստին առ ծառով միով և մուխ խմեն. և նա անդ կապեալ մնայ ի միւս ծառն ձեռակապ և մերկ և ձիւնն ի վերայ գալով։ Եւ ոչ ելնեն սպանել, այլ նստին եթէ ոք հանդիպի՝ զնա ըմբռնեսցեն զի նա խեղդեսցէ։ Եւ յետ մեծ պահու ինչ գայ անդրուստ մի հացածախ հոռոմ՝ բարձեալ զհաց իւր տաշտով. զնա ըմբռնեալ բերեն և դնեն ի ձեռս նորա պարան զի քարշեսցէ զնա խեղդելով. և նա աղաղակէ պաղատելով թէ Զեմ կար այդմ իրի. և նոքա հարկանեն առջառաջլօք և փայտիւ զի քարշեսցէ. և նա քարշէ և ոչ կարէ խեղդել,